



ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ գլխավոր տնօրենի

«28» ապրիլի 2026 թ. թիվ 155-26Լ հրամանով

«ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՊԼՅՈՒՍ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող գործունակ ֆիզիկական անձը:

Ապահովագրված անձ

Ապահովագրված անձ կարող են հանդիսանալ պայմանագրի կնքման պահին 65 տարեկանը չլրացած Ապահովադիրը և/կամ նրա փոխկապակցված անձինք:

Շահառու

Շահառու հանդիսանում է Ապահովագրված անձը, իսկ վերջինիս մահվան դեպքում՝ նրա օրինական ժառանգ(ներ)ը:

Ապահովագրության տարածք

Ապահովագրության տարածքն է ամբողջ աշխարհը:

Ապահովագրության ժամկետ

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ 366 հաջորդական օր, ըստ Ապահովադրի գործունեության հասցեի տեղական ստանդարտ ժամանակի:

Ապահովագրության կանոններ

«CRITICAL PLUS» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի «Կրիտիկական հիվանդություններից կամավոր ապահովագրության կանոններ» (այսուհետ՝ Կանոններ)

Ապահովագրական գումար, ապահովագրավճար

Ապահովագրավճարը տարբերակվում է՝ ելնելով ապահովագրական գումարից, և հավասար է.

ՀՀ դրամ

Տարեկան ապահովագրական գումար՝ մեկ ապահովագրված անձի հաշվով	Ապահովագրավճար՝ մեկ ապահովագրված անձի հաշվով
15 000 000	75 000
10 000 000	50 000
5 000 000	25 000

Ապահովագրության ծածկույթ

Ծրագրի շրջանակներում հատուցման ենթակա կրիտիկական հիվանդությունները / վիճակները.

1. Քաղցկեղի հիմնական տեսակներ, ներառյալ՝ գլխուղեղի բարորակ ուռուցք
2. Երիկամների ֆունկցիաների խանգարման վերջնական փուլ
3. Կենսականորեն կարևոր օրգանների փոխպատվաստում
4. Յրված սկլերոզ, որն ուղեկցվում է մշտական ախտանշաններով
5. Կաթված/պարալիչ
6. Կուրություն
7. Աորտայի վիրաբուժություն (կիրառվում է ենթասահմանաչափ՝ ապահովագրական գումարի 50%-ի չափով)
8. Սրտի փականների փոխպատվաստում կամ վերականգնում (կիրառվում է ենթասահմանաչափ՝ ապահովագրական գումարի 50%-ի չափով):

Լրացուցիչ պայմաններ

1. Ծածկույթը դադարում է կիրառվել, երբ լրանում է Ապահովագրված անձի 65 տարեկանը:
2. Կրիտիկական հիվանդությունը/վիճակը պետք է ախտորոշված լինի որակավորված բժիշկ-մասնագետի կողմից և հաստատված ռադիոլոգիական, հյուսվածքաբանական և լաբորատոր հետազոտություններով, որոնք ընդունելի կլինեն միջազգային առողջապահության կանոններով:
3. Կրիտիկական հիվանդության/վիճակի ախտորոշումից հետո ողջ մնալու պարտադիր ժամանակահատվածը (ապրելու ժամկետը) կազմում է 28 օր:
4. Սպասման ժամկետը կազմում է 60 օր:
5. Սույն Ապահովագրական պայմանագրում ներառված է նաև նախապես առկա վիճակների բացառման դրույթը, որը կիրառելի է ամբողջ կյանքի ընթացքում:
6. Եթե Ապահովագրողը պահանջ ներկայացնի գիտակցված կեղծ կամ խարդախ հիմքերով,

սույն Ապահովագրության պայմանագիրը անվավեր կճանաչվի և դրա ներքո բոլոր պահանջները կկասեցվեն:

7. Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու Ապահովագրված անձից անցնել բժշկական հետազոտություն կամ հանձնել այլ ողջամիտ թեստեր, որոնք հասանելի են Ապահովագրված անձի բնակության երկրում, ապահովագրական պատահարը հաստատելու նպատակով:

Չհատուցվող դեպքեր

Համաձայն Կանոնների

Հատուցման գործընթաց

Հատուցումն իրականացվում է միայն նշված հիվանդությունների առաջին անգամ ախտորոշվելու դեպքում:

Ցանկացած ախտորոշման մասին, որը կարող է հիմք հանդիսանալ ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու համար, ծանուցումը Ապահովագրողին պետք է տրամադրվի հնարավորինս սեղմ ժամկետներում բայց ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Ծանուցումը ստանալուց հետո խելամիտ ժամկետում Ապահովագրողին պետք է ներկայացվի մանրամասն բժշկական եզրակացություն ապահովագրական պատահարի առաջացման և պատճառի մասին:

Ապահովագրական պատահարի ժամանակ Ապահովագրված անձի գործողությունները, հատուցում ստանալու կարգը և ժամկետները սահմանված են Կանոններով: